

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

<p><b>Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը</b></p>	<p>Քիմիական արտադրության լայն պրոֆիլի ապարատավար</p>
<p><b>Դերը</b></p>	<p>Ապարատավարը իրականացնում է տեխնոլոգիական պրոցեսը համաձայն հրահանգի, հսկում և կարգավորում է համապատասխան ապարատների աշխատանքը, շահագործում ապարատները, սպասարկում համատեղ աշխատող սարքերի աշխատանքը, այդ թվում չափիչ-ստուգիչ և ավտոմատ կարգավորման, իրականացնում պարզագույն անալիզներ և հաշվարկներ:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 1</b></p>	<p>Վարել տեխնոլոգիական պրոցեսը</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշները</b></p>	<p>Լայն պրոֆիլի ապարատավարը նախապատրաստում է նյութերը և սարքավորումները, հսկում և կարգավորում համապատասխան ապարատների աշխատանքը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նյութերը և սարքավորումները համապատասխանում են տեխնիկական պահանջներին</li> <li>• Տեխնոլոգիական պրոցեսն անխափան ընթանում է</li> <li>• Տեխնոլոգիական ռեժիմը բնութագրող պարամետրերը գտնվում են նորմայի սահմաններում</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 2</b></p>	<p>Սպասարկել համատեղ աշխատող սարքերի աշխատանքը, այդ թվում չափիչ-ստուգիչ և ավտոմատ կարգավորման;</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Լայն պրոֆիլի ապարատավարը հսկում է տեխնոլոգիական պրոցեսն իրականացնող հիմնական ապարատի հետ համատեղ աշխատող սարքերի ցուցմունքները՝ հատկապես չափիչ-ստուգիչ և ավտոմատ կարգավորման, անհամապատասխանության դեպքում կարգաբերում այդ պարամետրերը և համապատասխան մատյաններում որոշակի ժամանակային ինտերվալներում կատարում գրառումներ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Չափիչ-ստուգիչ և ավտոմատ սարքերի ցուցմունքները գրանցված են համապատասխան մատյաններում</li> <li>• Չափիչ-ստուգիչ և ավտոմատ սարքերի ցուցմունքները համապատասխանում են տեխնոլոգիական ռեժիմով նախատեսված արժեքներին:</li> <li>• Տեխնոլոգիական պարամետրերի սահմանված արժեքներից</li> </ul>

	<p>շեղման դեպքում կատարվել է դրանց կարգաբերում և համապատասխան գրառումներ հատուկ մատյաններում:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 3</b></p>	<p>Շահագործել և կանգնեցնել ապարատները: Բացահայտել սարքավորումների անսարքությունների և թերությունների պատճառները</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Ապարատավարը տեխնոլոգիական սարքավորումները և ապարատները շահագործելիս նկատում է անսարքությունները և հնարավորության դեպքում կանգնեցնում դրանք, հակառակ դեպքում միացնում է վթարային ազդանշանը և շուտափույթ հրավիրում համապատասխան ծառայություններին: Բացահայտում է անսարքությունը, դրա պատճառը, հնարավորության դեպքում վերացնում այն, իսկ եթե անհրաժեշտ է լինում մասնագիտական վերանորոգում՝ գրանցում է համապատասխան մատյանում և հայտնում համապատասխան մարմիններին:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սարքավորման կամ ապարատի աշխատանքը չի համապատասխանում տեխնոլոգիական ռեժիմին:</li> <li>• Անսարք ապարատը եթե հնարավոր է անջատված է:</li> <li>• Անսարք անընդհատ աշխատող սարքավորման համար հրավիրված է համապատասխան ծառայություն:</li> <li>• Անսարքության վերաբերյալ կատարված են գրառումներ մատյանում:</li> <li>• Բացահայտված է անսարքության պատճառը:</li> <li>• Իրականացվել է պարզագույն վերանորոգում և ապարատը վերագործարկված է:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 4</b></p>	<p>Ապարատները և սարքավորումները նախապատրաստել կապիտալ վերանորոգման</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Ապարատավարը կապիտալ վերանորոգման ենթակա ապարատը կամ սարքավորումը անջատում է ընդհանուր տեխնոլոգիական շղթայից՝ առանց վնասելու ընդհանուր պրոցեսը, կամ մյուս սրքավորումների աշխատանքը և համապատասխան մատյանում կատարում է գրանցում:</p> <p>Ըստ անհրաժեշտության խորհրդատվություն է տրամադրում վերանորոգող մասնագետին անսարքության մանրամասների վերաբերյալ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ապարատը ճիշտ է անջատված ընդհանուր տեխնոլոգիական շղթայից:</li> <li>• Ապարատ տրվող բոլոր բաղադրիչների մուտքերը և ելքերը</li> </ul>

	<p>փակված են:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ապարատը պատրաստ է ենթարկվել տեղափոխման, կամ վերանորոգման տեղում</li> <li>• Համապատասխան մատյաններում կատարված են գրանցումներ:</li> <li>• Վերանորոգումից հետո ապարատը կրկին ընդունված է համապատասխան ստուգումներ և գրառումներ իրականացնելուց հերո:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 5</b></p>	<p>Վերցնել նմուշներ՝ պրոցեսի և ստացվող նյութերի որակի հսկման նպատակով</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Ապարատավարը որոշակի ժամանակային միջակայքով իրականացնում է նմուշների վերցնում ելանյութերից, ապարատում գտնվող և ստացվող պրոդուկտներից և դրանց վերաբերյալ կատարում համապատասխան գրառումներ մատյանում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ելանյութից վերցված նմուշը պատրաստ է հետագա անալիզի համար:</li> <li>• Ապարատում գտնվող խառնուրդից վերցված նմուշը պատրաստ է հետագա անալիզի համար:</li> <li>• Ստացված պրոդուկտից վերցված նմուշը պատրաստ է հետագա անալիզի համար:</li> <li>• Վերցված նմուշները ենթարկվել են համապատասխան մշակման՝ հետագա անալիզի համար:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 6</b></p>	<p>Իրականացնել պարզագույն անալիզներ և հաշվարկներ,</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Լայն պրոֆիլի ապարատավարը հումքի, կիսապրոդուկտների և ստացվող նյութերի որակը գնահատելու համար պետք է իրականացնի պարզագույն լաբորատոր անալիզներ, դրանց հետ կապված տարրական հաշվարկներ և գրանցի համապատասխան մատյաններում, անհրաժեշտության դեպքում կառուցի կորեր, կամ հնարավորության դեպքում այդ արդյունքները գրանցի համակարգչային ծրագրերով: Ըստ անալիզի տվյալների իրականացնի տեխնոլոգիական պրոցեսի պարամետրերի փոփոխություն և հսկողություն:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հումքի, կիսապրոդուկտների և պրոդուկտների վերցված նմուշները ենթարկվել են համապատասխան մշակման:</li> <li>• Իրականացվել է անալիզի համար անհրաժեշտ սարքերի ստուգում, ռեակտիվների պատրաստում, ինդիկատորների և այլ նյութերի առկայության ստուգում:</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Իրականացվել է վերցված նմուշների անալիզ:</li> <li>• Կատարվել են տարրական հաշվարկներ ըստ կատարված անալիզի տվյալների:</li> <li>• Անալիզի տվյալները գրանցվել են համապատասխան մատյաններում կամ համակարգչային ֆայլերում:</li> <li>• Ելնելով անալիզի արդյունքներից, անհրաժեշտության դեպքում տեխնոլոգիական պրոցեսում կատարվել են համապատասխան փոփոխություններ և պարամետրերի ճշտումներ:</li> </ul>
--	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**Խնդիրների բնագավառ 7** Իրականացնել հումքի ծախսի և տարեկան արտադրանքի ելքի հաշվարկներ:

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Ապարատավարը հումքի, օժանդակ նյութերի, էներգառեսուրսների և կողմնակի սարքերի տնտեսման նպատակով պետք է իրականացնի որոշակի տնտեսական հաշվարկներ՝ ելնելով չափիչ-ստուգիչ սարքերի և հումքի, օժանդակ նյութերի ծախսից և ստացվող պրոդուկտների քանակից: Հաշվարկները պետք է նախորոք մշակվեն և լինեն մատչելի և պարզ: Հաշվարկի արդյունքները պետք է կարողանա մշակել և դրանց համապատասխան ազդել տեխնոլոգիական պրոցեսի վրա:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մշակված է հումքի, օժանդակ նյութերի ծախսի նորմաները և հաշվարկաման եղանակը:</li> <li>• Հաշվարկված է հումքի, օժանդակ նյութերի ծախսը և գրանցված է համապատասխան մատյանում, կամ համակարգչային ֆայլում:</li> <li>• Ըստ հումքի և օժանդակ նյութերի իրական ծախսի հաշվարկված է արտադրանքի ելքը և այն համեմատված է տեսական արժեքի հետ:</li> <li>• Մշակվել են հումքի, օժանդակ նյութերի, էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման միջոցառումներ:</li> <li>• Սահմանվել են արտադրանքի ելքի մեծացման ուղիները:</li> </ul>
-------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**Խնդիրների բնագավառ 8** Օգտվել վթարային ազդանշանների համակարգից, պաշտպանական և հակահրդեհային պարագաներից:

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Ապարատավարը պարտավոր է խորը տիրապետել վթարային ազդանշանների համակարգին, կարողանա օգտվել անհատական պաշտպանական, սանիտարա-հիգենիկ, հակահրդեհային պարագաներից, ինչպես նաև կարողանա առաջին օգնությունը ցուցաբերել տուժածին:</p>
---------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքի ժամանակ պահպանում է անհատական հիգենայի կանոնները և պահանջները, աշխատում է ձեռնոցներով, դիմակով, ակնոցով, հատուկ համազգեստով:</li> <li>• Տիրապետում է վթարային ազդանշանների համակարգին:</li> <li>• Տիրապետում է հրդեհային անվտանգության պարագաների աշխատանքի սկզբունքին:</li> <li>• Կարողանում է առաջին օգնություն ցուցաբերել այրվածքների, թունավորումների դեպքում:</li> </ul>
<p><b>Պատասխատվությունը</b></p>	<p>Լայն պրոֆիլի ապարատավարը պատասխանատու է քիմիական արտադրության սարքավորումների և ապարատների անվտանգ և տեխնոլոգիական ռեժիմին համապատասխան շահագործման համար: Պատասխանատու է օժանդակ սարքավորումների, հատկապես չափիչ-ստուգիչ և ավտոմատ սարքերի աշխատանքի հսկման և ըստ դրանց ցուցմունքների տեխնոլոգիական ռեժիմի և ապարատների աշխատանքի կարգաբերման համար:</p> <p>Ապարատավարը պատասխանատու է նաև հումքի, նյութերի, էներգառեսուրսների ճիշտ և խնայողական օգտագործման և ստացվող կիսապրոդուկտների և պրոդուկտների բարձր ելքի և մաքրության համար:</p>
<p><b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b></p>	
<p><b>Լեզուներ</b></p>	<p>հայերեն - գերազանց մեկ օտար լեզու - բավարար</p>
<p><b>Համակարգիչ</b></p>	<p>MS Word - բավարար Internet Explorer` բավարար</p>
<p><b>Գիտելիքները</b></p>	<p>Էլեկտրատեխնիկայի հիմունքներ, ճարտարագիտական գրաֆիկա, վերանորոգման աշխատանքներում օգտագործվող նյութերի հատկությունները, ռադիոհեռուստատեսային սարքավորումների աշխատանքի սկզբունքները, դետալների պարամետրերի բովանդակությունը</p>
<p><b>Կարողությունները և հմտություններ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Քիմիական արտադրության սարքավորումները և ապարատները անվտանգ և տեխնոլոգիական ռեժիմին համապատասխան շահագործելու կարողություն</li> <li>• Համատեղ աշխատող սարքերի, հատկապես չափիչ-ստուգիչ և ավտոմատացման, սպասարկման, դրանց ցուցմունքների</li> </ul>

	<p>վերձանման և ըստ այդ արդյունքների տեխնոլոգիական ռեժիմի կարգաբերման կարողություն</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ելանյութերի, կիսապրոդուկտների և պրոդուկտների նմուշների վերցման կարողություն</li> <li>• Մարքավորումների անսարքության և թերությունների բացահայտման հմտություն</li> <li>• Պարզագույն վերանորոգման աշխատանքներ կատարելու հմտություն</li> <li>• Ապարատները և սարքավորումները կապիտալ վերանորոգման նախապատրաստելու հմտություն</li> <li>• Պարզագույն անալիզներ և դրանց հետ կապված տարրական հաշվարկներ կատարելու հմտություն</li> <li>• Տարրական տնտեսական հաշվարկներ կատարելու և գնահատականներ տալու հմտություն</li> <li>• տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն</li> <li>• գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն</li> <li>• վթարային ազդանշաններից, անհատական պաշտպանական միջոցներից և հարդեհային պաշտպանական միջոցներից օգտվելու կարողություն</li> </ul>
<p><b>Վերաբերմունքը</b></p>	<p>Բանիմաց, պատասխանատվության բարձր զգացումով, պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, նորը ընկալող, հարգալից, հայրենասեր</p>

ՄԱՍՆԱԳԵՏԻ 2512 «ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԼԱՅՆ ՊՐՈՖԻԼԻ ԱՊԱՐԱՏԱՎԱՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2512 Քիմիական արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության «Արհեստավոր» որակավորման աստիճանի «Լայն պրոֆիլի ապարատավար» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. Համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց

ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել նշված գործողությունները`

- Ներկայացնել յուրաքանչյուր կոնկրետ արտադրության սկզբունքային տեխնոլոգիական սխեման:
- Ներկայացնել արտադրության հիմնական փուլերը և սարքավորումները:
- Ներկայացնել պրոցեսի տեսական հիմունքները` տեխնոլոգիական ռեժիմի չափանիշները և պրոցեսի ընթացքի վրա ազդող գործոնները:
- Էսքիզավորել սարքավորումների և աշխատանքային տեղի սկզբունքային և բանվորական սխեման:
- Կարդալ տեխնոլոգիական սխեմայի բանվորական գծագրերը և սխեմաները
- Էսքիզավորել օժանդակ սարքավորումները և հանգույցներ, դրանց տեղադրումը և ներկայացնել դրանց դերը, բնութագիրը:
- Գործարկել արտադրական ապարատը, կամ տեխնոլոգիական պրոցեսը:
- Գրանցել չափիչ-ստուգիչ և ավտոմատ սարքերի ցուցմունքները և ըստ դրանց արժեքների եզրահանգումներ կատարել տեխնոլոգիական ռեժիմի կամ ապարատի աշխատանքի վերաբերյալ
- Ըստ չափիչ-ստուգիչ սարքերի ցուցմունքի, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել ապարատի աշխատանքի ռեժիմում` օգտվելով ավտոմատ կարգավորման ռեժիմից:
- Ապարատի անսարքության դեպքում հնարավորության դեպքում իրականացնել նրա կանգառ:
- Պարզել անսարքության պատճառը և ոչ բարդ անսարքության դեպքում իրականացնել պարզ վերանորոգում:
- Վերագործարկել ապարատի աշխատանքը:
- Եթե պրոցեսն անընդհատ է, ապա իրականացնել անսարք ապարատի անջատում ընդհանուր տեխնոլոգիական շղթայից` առանց ընդհատելու մյուս ապարատների և սարքերի աշխատանքը:

- Իրականացնել հումքի, կիսապրոդուկտների և պրոդուկտների նմուշների վերցնում անալիզի համար:
- Իրականացնել վերցված նմուշների նախնական մշակում և դրանց մասին գրանցում համապատասխան մատյանում:
- Իրականացնել վերցված նմուշների պարզագույն անալիզ:
- Անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել տեխնոլոգիական ռեժիմում, կամ փոփոխել ապարատի աշխատանքի պարամետրերը:
- Ներկայացնել վթարային ազդանշանների համակարգի աշխատանքը և ճիշտ հերթականությունը:
- Ճիշտ կրել անհատական պաշտպանական միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ, ակնոցներ և արտահագուստ:
- Ներկայացնել հակահրդեհային միջոցները և դրանք ճիշտ օգտագործել
- Ցուցադրել այրվածքների և թունավորումների դեպքում առաջին օգնություն ցուցաբերելու կարգը և հերթականությունը:
- Ընդունել և հանձնել հերթափոխը՝ համաձայն բանվորական հրահանգների
- Ներկայացնել հերթափոխի ընթացքում աշխատանքային հիգիենայի և կարգուկանոնի պահանջները:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունները կատարվել են չափորոշիչներով նախատեսված չափանիշների համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: